



Տրոլեյբուսի հոսանքալարի պոկվելու հետևանքով Հաճախորդի մեքենային պատճառված վնասի փոխհատուցման մերժում

Երևան քաղաքում ընթանալիս տրոլեյբուսի հոսանքալարը պոկվել և ընկել է Հաճախորդի ավտոմեքենայի վրա, որի արդյունքում մեքենային վնաս է պատճառվել: Ընկերությունը, սակայն հրաժարվել է վնասը փոխհատուցել՝ պատճառաբանելով, որ տրոլեյբուսի վարորդի մեղքը բացակայում է հոսանքալարի պոկվելու մեջ: Հատուցման մերժման որոշման հետ Հաճախորդը համամիտ չէ, քանի որ տրոլեյբուսի վարորդը մանևրել է, և նրա մեղքով է պատահարը եղել: Այսպիսով, Հաճախորդը դիմել է Հաշտարարին՝ Ընկերությունից պահանջելով փոխհատուցել իր կրած վնասը:

Հաշտարարը պահանջի քննությանը ներգրավել է անկախ փորձագետի, ում կողմից իրականացված փորձաքննության արդյունքում պարզվել է, որ ոչ տրոլեյբուսի, ոչ էլ ավտոմեքենայի վարորդների կողմից թույլ չեն տվել ճանապարհային երթևեկության կանոններին հակասող գործողություններ:

Պահանջի հետ կապված փաստաթղթերի և օրենսդրության պահանջների համալիր վերլուծությունը հանգել է հետևյալին. ավտոմեքենան և տրոլեյբուսը հանդիսանում են *առավել վտանգի աղբյուրներ և դրանց շահագործման հետևանքով այլ անձանց պատճառված վնասը պետք է հատուցվի*, եթե չապացուցվի, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Ընդ որում, *օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ: Տվյալ դեպքում, փաստորեն, տրոլեյբուսի վարորդի մեղքը բացակայում է, սակայն տրոլեյբուսը իր առավել վտանգ ստեղծող գործունեությամբ վնաս է պատճառել ավտոմոբիլին, հետևաբար, տրոլեյբուսի սեփականատերը/օրինական տիրապետողը ավտոմոբիլին պատճառված վնասի համար պատասխանատու է անկախ իր մեղքի:* Վերոնշյալից բխում է, որ առկա է նաև Ընկերության՝ տվյալ վնասի դիմաց ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը, քանի որ ապացուցված է առավել վտանգի աղբյուրի շահագործման արդյունքում Հաճախորդին վնաս պատճառած լինելու փաստը, վնաս պատճառած անձը չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով, վնաս պատճառողը չի ապացուցում, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և ապացուցված չէ, որ տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը: Ուստի, հաշվի առնելով նշվածը, Ընկերությունը պարտավոր է տեղի ունեցած պատահարի արդյունքում հատուցել Հաճախորդի գույքին պատճառված վնասները:

Սույն նկատառումները ներկայացվել են կողմերին, ինչից հետո Ընկերությունը որոշել է հաշտության համաձայնագիր կնքել Հաճախորդի հետ՝ ամբողջությամբ փոխհատուցելով վերջինիս կրած վնասը: